Հասցեատեր՝

«Նոա ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ noahfcarm@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17.10.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	18A-034
Խախտում՝	1. «Նոա-07» թիմի գլխավոր մարզիչ Գուստավո Դե Ալմեիդա Դա Սիլվա Կարդոսո (55380) կողմից մրցավարի հասցեին հայհոյելը (Հավելված 1 Ե, 29-րդ կետ) 2. «Նոա-07» թիմի մարզիչ Նորայր Սահակյանի (1703) կողմից ոչ մարզական պահվածքի դրսևորումը (Հավելված 1 Ե, 28-րդ կետ) 3. «Նոա-07» թիմի ֆուտբոլիստ Կարեն Առուստամյանի (29205) կողմից ոչ մարզական պահվածքի դրսևորումը (Հավելված 1 Ե, 28-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 18տ. պատանեկան առաջնություն
Խաղ՝	«Արարատ-Արմենիա-07» - «Նոա-07», 05.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Նոա-07» թիմի գլխավոր մարզիչ Գուստավո Դե Ալմեիդա Դա Սիլվա Կարդոսոյին (55380) զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 25 օր ժամկետով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 5-ից սկսած: «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով:
2. «Նոա-07» թիմի մարզիչ Նորայր Սահակյանին (1703) զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 5-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց

թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

3. «Նոա-07» թիմի ֆուտբոլիստ Կարեն Առուստամյանին (29205) որակազրկել 1 (մեկ) խաղով։ Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 5-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։